

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի

23.11.1998թ. թիվ 32 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում

ՓՈՓՈԽՎԱԾ Է

Խորհրդի 25.10.2018թ. թիվ 234 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

ՓՈՓՈԽՎԱԾ Է

Արթուր Զավադյան

Խորհրդի 24.01.2019թ. թիվ 5 որոշմամբ

Խորհրդի նախագահ

Արմեն Տեր-Տադևոսյան



(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ «Կանոնադրություն») սահմանվում են «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») «Կենտրոնական» մասնաճյուղի (այսուհետ՝ «Մասնաճյուղ») որպես Բանկի առանձնացված ստորաբաժանման նպատակները, խնդիրները, գործառնությունները, իրավասությունները, աշխատանքների կազմակերպումը և կառավարումը, Մասնաճյուղի կառավարչի լիազորությունները, ինչպես նաև աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները և պատասխանատվությունը:

1.2. Մասնաճյուղը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը գործում է Կանոնադրությամբ և/կամ Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

1.3. Մասնաճյուղն իր աշխատանքային գործունեությունը ծավալում է /գտնվելու վայրն է/ «Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 49 շենք, 1/3» հասցեում:

1.4. Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ նորմատիվ և Բանկի ներքին իրավական ակտերով:

1.5. Մասնաճյուղը գործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվելուց հետո:

1.6. Կանոնադրությունը հաստատվում է Բանկի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ, իսկ Մասնաճյուղի կառուցվածքը և աշխատատեղերը՝ Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի (այսուհետ՝ «Գլխավոր գործադիր տնօրեն») հրամանով:

1.7. Մասնաճյուղը լուծարվում է Խորհրդի որոշմամբ:

1.8. Մասնաճյուղի գործունեության և պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Բանկը:

1.9. Մասնաճյուղի գույքը տրամադրվում է Բանկի կողմից, որը հաշվառվում է Բանկի հաշվեկշռում:

1.10. Մասնաճյուղն ունի իր անվանումով և Բանկի խորհրդանիշով կնիք:

1.11. Մասնաճյուղի լրիվ անվանումն է՝

հայերեն - «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոնական» մասնաճյուղ.

ռուսերեն – Филиал “Центральный” закрытого акционерного общества “Конверс Банк”.

անգլերեն – *“Central” branch of “Converse Bank” closed joint-stock company.*

Մասնաճյուղի կրճատ անվանումն է.

հայերեն - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Կենտրոնական» մասնաճյուղ.

ռուսերեն – Филиал “Центральный” ЗАО “Конверс Банк”.

անգլերեն – *“Central” branch of “Converse Bank” C.J.S.C.*

1.12. Մասնաճյուղի հիմնական նպատակներն են.

ա/ Բանկի ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
իրավաբանական ու ֆիզիկական անձանց /այսուհետ՝ տնտեսվարող սուբյեկտներ/ և Բանկի միջև փոխշահավետ ֆինանսատնտեսական հարաբերությունների հաստատում,
բ/ ֆիզիկական և իրավաբանական անձանց սպասարկում,
գ/ ավանդների ներգրավում,
դ/ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ ֆինանսական գործառնությունների իրականացում,
ե/ նոր բանկային ծառայությունների և վճարային գործիքների ներդրում և ընդլայնում տարածաշրջանում:

1.13. Մասնաճյուղի առջև դրված խնդիրներն են.

ա/ Տնտեսվարող սուբյեկտների և Բանկի միջև գործարար կապերի հաստատում ու խորացում, ֆինանսական, տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության ապահովում,
բ/ Մասնաճյուղի կողմից իրականացվող գործառնությունների արդյունավետության բարձրացում:

1.14. Մասնաճյուղը համարվում է ստեղծված ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել Կանոնադրությամբ նախատեսված գործառնությունները ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման վկայական ստանալու պահից:

1.15. Մասնաճյուղի աշխատանքի տարեկան արդյունքները հաստատվում են Բանկի Տնօրինության կողմից:

2. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Մասնաճյուղը կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները /այսուհետ՝ «Գործառնություններ»/.

2.1.1. ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

2.1.2. տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

2.1.3. տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ /վարկային նամակներ/,

2.1.4. բացել և վարել հաշիվներ,

2.1.5. մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և/կամ այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվներ,

2.1.6. գնել /գեղչել/, վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ,

2.1.7. կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները /հավատարմագրային /լիազորագրային/ կառավարում/,

2.1.8. գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային /ստանդարտացված/ ձուլակտորներ և հուշադրամներ,

2.1.9. գնել և վաճառել /փոխանակել/ արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

2.1.10. իրականացնել ֆինանսական վարձակալություն /լիզինգ/,

2.1.11. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

2.1.12. մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

2.1.13. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն,

2.1.14. ընդունել կոմունալ և այլ վճարումներ,

2.1.15. իրականացնել փոխանցումներ, այդ թվում՝ արագ փոխանցումների հատուկ համակարգերով:

2.2. Գործառնությունները Մասնաճյուղին իրականացնում է Բանկի անունից՝ Խորհրդի և/կամ Տնօրինության որոշումներով, Գլխավոր գործադիր տնօրենի հրամաններով սահմանված իրավասությունների շրջանակներում:

2.3. Մասնաճյուղը Գործառնություններն իրականացնում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.4. Բանկի թույլտվությամբ Մասնաճյուղը կարող է իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ Կանոնադրության 2.1 կետում նշված գործառնությունների հետ և եթե դրանք թույլատրելի չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքին և չի վտանգում երրորդ անձանց շահերը:

2.5. Մասնաճյուղը երաշխավորում է իր հաճախորդների՝ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.6. Մասնաճյուղը, ելնելով իր առջև դրված նպատակներից և խնդիրներից, իրականացնում է նաև.

2.6.1. Բանկի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,

2.6.2. ՀՀ ֆինանսական շուկայում առկա առաջարկի և պահանջարկի, ծրագրերի և պայմանագրերի նախագծերի, իրավաբանական ու ֆիզիկական անձանց և Բանկի միջև տնտեսական փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերլուծության ու դրանց հետ կապված առաջարկությունների ներկայացում Բանկի կառավարման իրավասու մարմիններին,

2.6.3. Բանկի կողմից կազմակերպվող խորհրդակցություններին մասնակցությունը,

2.6.4. Բանկի շահերի ներկայացում և պաշտպանություն ՀՀ պետական /այդ թվում՝ դատական/ և այլ մարմինների հետ հարաբերություններում,

2.6.5. Կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

2.7. Մասնաճյուղը կարող է Բանկի անունից կնքել ցանկացած քաղաքացիաիրավական գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է Գործառնությունների իրականացման համար, եթե առկա է Բանկի կառավարման իրավասու մարմնի համապատասխան որոշումը կամ վերջինիս կողմից տրված լիազորագիրը: Առանց հիշատակված որոշման կամ լիազորագրի Մասնաճյուղին արգելվում է կնքել համապատասխան քաղաքացիաիրավական գործարք:

3. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Անհրաժեշտության դեպքում Մասնաճյուղը, Բանկի համապատասխան թույլտվությամբ, կարող է օգտագործել ՀՀ կամ այլ երկրների բանկերում Բանկի ունեցած հաշիվները:

3.2. Մասնաճյուղն իրավունք ունի Բանկի անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ միայն Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և Մասնաճյուղի կառավարչին տրված լիազորագրում սահմանված սահմանաչափերի սահմաններում:

3.3. Մասնաճյուղի աշխատողները պարտավոր են խստորեն պահպանել բանկային, առևտրային, ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները /այդ թվում նաև՝ աշխատանքից ազատվելուց հետո/, որի համար կրում են պատասխանատվություն ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Մասնաճյուղի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Բանկը:

4.2. Մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումն ու կոորդինացումն իրականացնում է Մասնաճյուղի կառավարիչը /այսուհետ՝ Կառավարիչ/:

4.3. Կառավարիչը նշանակվում և ազատվում է պաշտոնից Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի հրամանով:

4.4. Կառավարիչը գործում է Գլխավոր գործադիր տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

4.5. Կառավարիչը և Մասնաճյուղի աշխատակիցները կարող են լինել ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիներ:

4.6. Կառավարիչը Կանոնադրության և իրեն տրված լիազորագրի սահմաններում.

ա/ տնօրինում է Մասնաճյուղի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից,

բ/ գործում է Մասնաճյուղի անունից, ներկայացնում և պաշտպանում է Մասնաճյուղի շահերը պետական /այդ թվում՝ դատական/ և այլ մարմինների, ինչպես նաև ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների հետ հարաբերություններում,

գ/ Մասնաճյուղում արձակում է հրամաններ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարման գործընթացը,

դ/ քննարկում է Մասնաճյուղի հաճախորդների բողոքները, դիմումները՝ տալով դրանց համապատասխան ընթացք,

ե/ առաջարկություններ է ներկայացնում Մասնաճյուղի աշխատատեղերի քանակի, ինչպես նաև աշխատողների թեկնածությունների վերաբերյալ,

զ/ առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

է/ ապահովում է բանկային, ծառայողական, առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանությունը,

ը/ Բանկի իրավասու մարմինների քննարկմանն է ներկայացնում իր առաջարկություններն ու դիտողությունները բանկային նոր տեխնոլոգիաների զարգացման և ընդլայնման, ինչպես նաև Մասնաճյուղի գործունեության բարելավման ուղղությունների վերաբերյալ,

թ/ ապահովում է Մասնաճյուղի վարչական շենքի պահպանությունը, հակահրդեհային պաշտպանության, աշխատողների կողմից աշխատանքային կարգապահության կանոնների և նորմերի պահպանումը,

ժ/ կատարում է այլ գործառնություններ:

5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կառավարիչը իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի՝ ելնելով Բանկի շահերից, իր իրավունքների և պարտականությունների կատարումն իրականացնի բարեխիղճ և ողջամիտ ժամկետներում:

5.2. Կառավարիչը ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Բանկի առջև պատասխանատվություն է կրում իր գործողությունների /անգործության/ հետևանքով /այդ թվում՝ լիազորությունների սահմանազանցմամբ/ Բանկին պատճառված վնասի համար:

5.3. Կառավարիչն ազատվում է Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է Բանկի այլ ղեկավարների՝ իր կողմից կատարման համար պարտադիր ցուցումներով:

5.4. Կառավարիչն աշխատանքից ազատելը վերջինիս չի ազատում Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

5.5. Եթե վնասը Բանկին պատճառվել է Մասնաճյուղի աշխատակցի/կիցների/ կողմից, ապա վերջինս/ներս/ Կառավարիչի հետ միասին Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր մեղքին համամասնորեն:

5.6. Կառավարիչը պատասխանատվություն է կրում՝

ա/ Մասնաճյուղի վրա Կանոնադրությամբ դրված խնդիրների և Գործառնությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

բ/ ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների ոչ պատշաճ կատարման համար,

գ/ Ֆինանսական միջոցների ներգրավման աշխատանքներն անարդյունավետ կազմակերպելու համար,

դ/ Մասնաճյուղի ակտիվների եկամտաբերությունը և իրացվելիությունն ոչ պատշաճ ապահովելու համար,

ե/ Մասնաճյուղի աշխատողների կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարումն ու աշխատանքային կարգապահության պահպանումը չապահովելու համար,

զ/ Մասնաճյուղի հաճախորդ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների դիմում-բողոքները չարձանագրելու և/կամ դրանց ժամանակին ընթացք չտալու համար,

է/ Բանկի իրավասու մարմիններին, ինչպես նաև պետական և այլ մարմիններին իր կողմից ներկայացվող հաշվետվությունների և/կամ այլ տեղեկատվության ոչ արժանահավատության և դրանց՝ համապատասխան մարմիններին ժամանակին չներկայացման համար,

ը/ Բանկի, ՀՀ կենտրոնական բանկի և պետական իրավասու այլ մարմինների կողմից կատարված ստուգումների/վերստուգումների/ արդյունքում հայտնաբերված թերությունները ժամանակին և ամբողջությամբ չվերացնելու համար,

թ/ իր կողմից Մասնաճյուղին հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չվերականգնելու և/կամ այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու համար:

5.7. Մասնաճյուղը ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով, ձևերով և պարբերականությամբ հաշվետվություններ է ներկայացնում Բանկին:

5.8. Մասնաճյուղի գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

5.9. Մասնաճյուղը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.10. Մասնաճյուղը գլխավոր հաշվապահ չի ունենալու: Մասնաճյուղի և Բանկի գլխամասային գրասենյակի միջև առկա է էլեկտրոնային կապ, որն ապահովում է Մասնաճյուղում կատարվող գործառնությունների ակնթարթային հաշվառումը Բանկի ընդհանուր տեղեկատվական բազայում և հաշվեկշռում:

6. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6.1. Մասնաճյուղի ֆինանսական միջոցները ձևավորվում են.

6.1.1. Մասնաճյուղի հաճախորդ տնտեսավարող սուբյեկտների հաշիվներում առկա միջոցներից, այդ թվում՝ ավանդների տեսքով ներգրավված միջոցներից ստացված եկամտից,

6.1.2. Բանկի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներից,

6.1.3. Մասնաճյուղի կողմից իրականացվող գործառնություններից ստացված շահույթից:

7. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄԸ

7.1. Մասնաճյուղի գործունեության արդյունքներն արտացոլվում են վերջինիս կողմից Բանկ ներկայացված հաշվետվություններում:

7.2. Մասնաճյուղում ստուգումներ կարող են անցկացնել ինչպես Բանկը, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ պետական այլ լիազորված մարմինները: Ստուգումների արդյունքները քննարկվում են Բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից:

8. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱԲԵՑՈՒՄԸ

8.1. Մասնաճյուղի գործունեությունը դադարեցվում է.

8.1.1. Բանկի խորհրդի որոշմամբ,

8.1.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի լուծարման կամ վերակազմավորման դեպքում,

8.1.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում և կարգով:

8.2. Մասնաճյուղի գործունեության դադարեցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնաճյուղի գործունեությունը համարվում է դադարած ՀՀ կենտրոնական բանկում այդ մասին համապատասխան գրառում կատարվելուց հետո:

8.3. Մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին հայտարարությունը տպագրվում է մամուլում: